ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 27.06.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ

քննող անձի

թիվ ՍՑ-ԷՍ-2018/73

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 07.06.2018թ. թիվ 03/26-3/10339-18 գրությամբ «Ավետիսյան Շին մոնտաժ» ՍՊԸ-ին /ՀՎՀՀ 00905623/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Սպիտակի համայնքապետարանի 05.06.2018թ. թիվ 597 գրության հիման վրա, 07.06.2018թ. նախաձեռնել է «Ավետիսյան Շին մոնտաժ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու ընթացակարգ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

2. <u>Սպիտակի համայնքապետարանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Սպիտակի համայնքապետարանը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 05.06.2018թ. թիվ 597 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի պահանջներով, ներկայացվում է «Ավետիսյան Շին մոնտաժ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով նշված ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով»:

Պատվիրատուն ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն վերջինիս կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. <u>«Ավետիսյան Շին մոնտաժ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Ավետիսյան Շին մոնտաժ» ՍՊԸ-ն 18.06.2018թ. Բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Կից Ձեզ եմ ներկայացնում «Ավետիսյան Շին Մոնտաժ» ՍՊԸ-ի 2018թ. շինմոնտաժային աշխատանքների պայմանագրերը՝ մատնանշելով, որ սույն պայամանագրերը կնքվել են ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգին համապատասխան:

Հարկ է նշել, որ պայմանագրերից մեկն արդեն իսկ կատարվել է ընթացակարգին համապատասխան, մասնավորապես՝ 2018թ. ապրիլի 5-ին կնքված «Աստղաձորի համայնքապետարանի Մարշալ Բաղրամյան և Գարեգին Նժդեհի փողոցների արտաքին լուսավորության ցանցի կառուցման կապալային աշխատանքների կատարման» գնման պայմանագիրը:

Հարկ է նշել, որ «Ավետիսյան Շին Մոնտաժ» ՍՊԸ-ն գործում է 2017 թվականից և ունեցել է շուրջ 17 մլն. ՀՀ դրամին համարժեք համախառն եկամուտ, որից վճարվել են հարկեր պետական բյուջե և ապահովվել շուրջ 10 աշխատատեղ ՀՀ քաղաքացիների համար:

Ստորև ներկայացնում եմ հրավերի բովանդակության այն կետը, որը Պատվիրատուի կողմից համարվել է անհամապատասխան ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգին, մասնավորապես.

1-ին մաս, 2.4 կետ, 1-ին ենթակետ. «Ֆինանսական միջոցներ», որի որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով.

ա. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտը ներկայացնելուն նախորդող՝

- երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը չպետք է պակաս լինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկից.

- հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չպետք է գերազանցի ակտիվների հաշվեկշռային արժեքը:

Հարկ է նշել, որ սահմանված ընթացակարգին համապատասխան «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի «ա» ենթակետը պետք է համապատասխանի նույն հրավերում նշված «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի «ա» ենթակետին, որը չի համապատասխանում, մասնավորապես.

1-ին մաս, 2.4 կետ, 3-րդ ենթակետ. «Մասնագիտական փորձառություն», որի որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ ընթացակարգի շրջանակում մասնակցի

ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում՝ առնվազն մեկ պայմանագրի շրջանակում կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում սույն հրավերով պահանջվող լիցենզիաների շրջանակներում աշխատանքների կատարված լինելը (շինարարական ծրագրերի դեպքում տնտեսական գործունեության նույն խմբերը սահմանվում են հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը և ներդիրները):

Խնդրում եմ Ձեզ հաշվի առնել վերը նշված անհամապատասխանությունը և «Ավետիսյան Շին Մոնտաժ» ՍՊԸ-ի «ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-18/11» ծածկագրով մասնակությունը չհամարել կոպիտ բացթողում, քանի որ 2018թ.-ից «Ավետիսյան Շին Մոնտաժ» ՍՊԸ-ն ակտիվ մասնակցում է պետական բյուջետային գնումներին և ցանկանում է ծառայել ՀՀ շահերին»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Ընկերության տնօրեն Համլետ Ավետիսյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/73 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 07.06.2018թ. թիվ 03/26-3/10339-18 գրությունը և կից փաստաթղթերը, Սպիտակի համայնքապետարանի 05.06.2018թ. թիվ 597 գրությունը, «ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-18/11» ծածկագրով գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-18/11» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 22.05.2018թ. նիստի թիվ 2, 24.05.2018թ. նիստի թիվ 3 և 31.05.2018թ. նիստի թիվ 4 արձանագրությունները, «Ավետիսյան Շին մոնտաժ» ՍՊԸ-ի 18.06.2018թ. Բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնած դիրքորոշումը.

Սպիտակի համայնքապետարանի կարիքների համար Սպիտակ համայնքի Այգեստան-1, Քըրք Քըրքորյան, Գր. Լուսավորիչ, Բանավան թաղամասերի և Խնկոյան, Աճեմյան, Մյասնիկյան փողոցների լուսավորության համակարգերի կառուցման և Սպիտակ համայնքի Էստոնական, ՈՒզբեկական, Տաշիր թաղամասերի փողոցների լուսավորության համակարգերի վերակառուցման աշխատանքների գնման նպատակով կազմակերպված «ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-18/11» ծածկագրով գնանշման ընթացակարգին (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել «Ավետիսյան Շին մոնտաժ» ՍՊԸ-ն:

Ընկերությունը Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N3 հավելվածով՝ հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-18/11» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Հանձնաժողովը 24.05.2018թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրել է, որ «Ավետիսյան Շին մոնտաժ» ՍՊԸ-ի առաջարկած գինը 1-ին չափաբաժնի մասով կազմել է 24,932,400 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ) և նույն արձանագրության 2.1 կետով որոշել է «ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-18/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել «Ավետիսյան Շին մոնտաժ» ՍՊԸ-ին:

Նույն արձանագրության 3-րդ կետով Հանձնաժողովը որոշել է ՀՀ կառավարությանն առընթեր ՊԵԿ հարցում ներկայացնել «Ավետիսյան Շին մոնտաժ» ՍՊԸ-ի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև ընթացակարգի հրավերի «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Հանձնաժողովը 31.05.2018թ. ժամը 12:00-ին նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրել է, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից 29.05.2018թ. տրամադրված տեղեկատվության՝ «Ավետիսյան Շին մոնտաժ» ՍՊԸ-ի երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս է ներկայացված գնային առաջարկից, ինչը հակասում է ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 63-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությանը: Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը որոշել է «Ավետիսյան Շին մոնտաժ» ՍՊԸ-ի հայտը մերժել և Ընկերության տվյալները համապատասխան հիմքերով ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընթացակարգ նախաձեռնելու համար:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին.
- 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում.
- 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի

կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.

- 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Նույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում նույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:
- 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին:
- 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ

կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

- 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

- 63-րդ կետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝ հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող՝

ա. երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից,

բ. հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:

«ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-18/11» ծածկագրով գնանշման հարցման հրավերի 1-ին մասի 2.5 կետի 3-րդ ենթակետի՝

- «ա» պարբերության համաձայն՝ «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝ Հայաստանի

Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտը ներկայացնելուն նախորդող՝

- երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը չպետք է պակաս լինի նույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկից.

- հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չպետք է գերազանցի ակտիվների հաշվեկշռային արժեքը(...):

- «բ» պարբերության համաձայն՝ նույն ենթակետի «ա» պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, որի իսկությունը հանձնաժողովը գնահատում է նույն հրավերով սահմանված պայմաններով:

- 7.13 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև սույն հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում սույն ենթակետում հարցումն ուղարկվում է Ashkhen_Papoyan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին սույն հրավերի 7-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով Lusine_Ghahramanyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին.

- 7.15 կետի համաձայն՝ կոմիտեն նույն հրավերի 1-ին մասի 7.13 կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին նույն հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն: Նույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության

չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում նույն հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջներին և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մեժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Նույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում նույն հրավերի 1-ին մասի 7.20 կետի 2-րդ ենթակետով նախատեսված ընթացակարգը:

- 7.20 կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ նույն հրավերով նախատեսված որակավորման պահանջները հիմնավորող փաստաթղթերը գնահատելու նպատակով հրավիրվող նիստում առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված, ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված, որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում ծանուցմանը պարտադիր կցվում է հանձնաժողովի նիստի արձանագրության պատճենը, որում պարտադիր և մանրամասն պետք է նկարագրված լինեն գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունները:

• 7.21 կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով նույն հրավերի 1-ին մասի 8.13-ից 8.20-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

ՀՀ ֆինանսների նախարարի 09.10.2017թ. N Պ-2 «Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ տարաբնույթ ընկալվող դրույթների վերաբերյալ» պաշտոնական պարզաբանման 1-ին կետով սահմանվել է «ֆինանսական միջոցներ» չափանիշի մասով արձանագրված անհամապատասխանության շտկման կարգը: Մասնավորապես, անհամապատասխանությունը կարող է շտկվել՝ ինչպես տվյալ մասնակցի կողմից Կոմիտեից ստացած գրավոր տեղեկատվությունը պատվիրատուին ներկայացմամբ, այնպես էլ Կոմիտեի կողմից տրված նոր եզրակացությամբ: Ընդ որում, տվյալ դեպքում պատվիրատուի կողմից Կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

• 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը;

• 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ:

- 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:
- 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ընկերության հայտը Հանձնաժողովի կողմից մերժվել է այն հիմքով, որ ըստ ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից 29.05.2018թ. տրամադրված տեղեկատվության՝ «Ավետիսյան Շին մոնտաժ» ՍՊԸ-ի երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը (17,783,984 ՀՀ դրամ) պակաս է եղել ներկայացված գնային առաջարկից (24,932,400 ՀՀ դրամ):

Բողոքներ քննող անձն արձանագրում է նաև, որ Ընկերության կողմից ներկայացված՝ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություն արձանագրելուց հետո Հանձնաժողովը նույն օրն էլեկտրոնային եղանակով չի ծանուցել Ընկերությանը՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել առկա անհամապատասխանությունը:

Բողոքներ քննող անձը գտնում է, որ Հանձնաժողովը՝ չծանուցելով Ընկերությանը և չառաջարկելով վերջինիս մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունը՝ խախտել է Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով, Կարգի 47-րդ կետով, Հրավերի 7.20 կետի 2-րդ և ՀՀ ֆինանսների նախարարի 09.10.2017թ. N Պ-2 պաշտոնական պարզաբանման 1-ին կետով սահմանված պահանջները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Ավետիսյան Շին մոնտաժ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 07.06.2018թ. թիվ 03/26-3/10339-18 գրությամբ «Ավետիսյան Շին մոնտաժ» ՍՊԸ-ին /ՀՎՀՀ 00905623/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ